ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ԱՄՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Արարատ Միրզոյան

Հայոց ցեղասպանությունն իր ծավալներով և իրականացման ձևերով համաշխարհային պատմության նորագույն շրջանում մարդու իրավունքների ամենակոպիտ ոտնահարումներից մեկն էր: Մի ողջ էթնիկական հանրույթի բնաջնջման նպատակ ունեցող հանցագործության վտանգավոր նախադեպ լինելով՝ այն դիտվել է իբրև սպառնալիք ողջ մարդկության համար և դասվել է մարդկության դեմ գործված հանցագործությունների շարքին: Ժամանակին պատշաճ պատասխան չստանալով՝ Հայոց մեծ եղեռնն օրինակ է դարձել ցեղասպանության հետագա դրսևորումների համար: Ուստի, ցանկանալով կանխել նման լայնածավալ ոճրագործության կրկնությունը՝ համաշխարհային հանրությունը ձեռնամուխ է եղել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործին: Աշխարհի մի շարք երկրներ և հեղինակավոր միջազգային կազմակերպություններ արդեն իսկ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Բազմաթիվ այլ պետություններում այդ գործընթացը դեռ շարունակվում է:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը: Ինչպես և մյուս երկրներում, այստեղ ևս գործընթացի հիմնական՝ երկրորդ փուլն սկսվել է 1965թ., սակայն ինչպես շատ այլ երկրներ, ԱՄՆ-ը ևս ամենևին էլ անծանոթ չէր խնդրին: Այն իր բավական գործուն, անգամ՝ բացառիկ մասնակցությունն էր ունեցել հայոց Մեծ եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի առաջին փուլում, ընդ որում՝ թե՛ պաշտոնական վավերագրերի մակարդակով ցեղասպանության փաստն արձանագրելու և դրա վերաբերյալ տեղեկատվությունն աշխարհում տարածելու, թե՛ ցեղասպանության գործընթացին միջամտելու և վերապրածներին օգնություն ցույց տալու առումներով: Միաժամանակ ԱՄՆ-ը, ելնելով ինչպես զուտ մարդասիրական, այնպես էլ քաղաքական ու տնտեսական շահերից, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայոց ցեղասպանության դատապարտման և Արևմտյան Հայաստանը ներառող հայկական պետականության ստեղծման խնդրին առավել ուժգին հետամուտ եղած պետությունն էր, քանի դեռ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական նոր իրողությունների բերումով խնդիրը չէր կորցրել արդիական հնչեղությունը: Բացի այդ, ԱՄՆ-ը ԽՍՀՄ և Մեծ Բրիտանիայի հետ միաժամանակ առիթ էր ունեցել արծարծել հայկական ջարդերի և փոխհատուցման խնդիրն արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին:

Արարատ Միրզոյան - ասպիրանտ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան

Արդեն 1965թ. հետո ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը հայտնվել է մարդու իրավունքների և արտաքին քաղաքական գերակայությունների խաչաձևման բարդ հոլովույթում: Այսպես, մի կողմից՝ ԱՄՆ-ը իրեն հռչակել է մարդու իրավունքների անխախտելիության սկզբունքի վրա հիմնված պետություն և ողջ աշխարհում մարդու իրավունքների առաջատար պաշտպան: Իսկ ժամանակակից աշխարհում ցեղասպանությունը դիտարկվում է հենց մարդու իրավունքների առումով, և ցեղասպանության անցյալի դեպքերի ճանաչումն ու դատապարտումը կարևորվում են ապագայում մարդկությանը նմանատիպ հանցագործություններից ձերբազատելու համատեքստում: Այս իմաստով ԱՄՆ-ը չի կարող խուսափել պարբերաբար Հայոց ցեղասպանության խնդրին բախվելուց: Եվ իսկապես, ԱՄՆ-ում բավական ուժեղ է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման միտումը, և ԱՄՆ-ը, իրոք, ընթանում է այս ճանապարհով: Մյուս կողմից, սակայն, պետք է խոստովանել, որ հարցը չի կարող չդիտարկվել նաև զուտ քաղաքական հարթությունում: Եվ այս առումով խնդիրը բարդանում է, քանի որ ենթադրվում է, թե ցեղասպանության ճանաչմանը հետևելու է փոխհատուցման խնդրի արծարծումը, ինչը ծանր կացության մեջ է դնելու Թուրքիային: Մինչդեռ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր Թուրքիան ԱՄՆ ռազմավարական դաշնակիցն է և տարածաշրջանում նրա հենարանը՝ սկզբում ԽՍՀՄ-ի, ապա նաև արմատական մահմեդական արաբական աշխարհի դեմ պայքարում, ինչպես նաև լուրջ այլընտրանք է եվրոպական գերտերությունների՝ էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցում հավանական ոչ ամերիկամետ դիրքորոշման դեպքում:

Այս պայմաններում Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ում պաշտոնապես ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարեցին առանձին նահանգային և քաղաքային իշխանությունները: Նախ, նահանգային և առավել ևս քաղաքային իշխանություններն անհամեմատ ավելի ազատ էին ոչ միայն մարդու իրավունքներին վերաբերող (նույնիսկ համամարդկային նշանակություն ունեցող), այլև անգամ լուրջ քաղաքական հնչեղություն ունեցող այս կամ այն հարցում իրենց վերաբերմունքն արտահայտելու և գնահատական տալու մեջ, քանի որ նրանց գնահատականները չէին հանգեցնում, համենայնդեպս անմիջականորեն, ԱՄՆ ներքին և հատկապես արտաքին քաղաքականության մեջ որոշակի ճշգրտումներ անելու անհրաժեշտությանը: Քաղաքական բնույթ կրելով և իրավական ակտերի ուժ ունենալով հանդերձ՝ նահանգային օրենսդրական-ներկայացուցչական մարմինների ընդունած բանաձևերն ու նահանգապետերի հայտարարությունները, այնուամենայնիվ, ավելի շատ պարզապես բարի կամքի դրսևորում էին: Բացի այդ, մասամբ նաև հենց այդ պատճառով, նահանգային իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչումը համեմատաբար ավելի քիչ դիմադրության էր հանդիպում Հայոց ցեղասպանության ճանաչման հակառակորդների կողմից, ինչն իր հերթին ավելի դյուրին էր դարձնում գործընթացը:

Երկրորդ, ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման երկրորդ փուլի սկզբում

հայ համայնքը դեռևս բավական թույլ էր թե՛ իր անդամների թվաքանակի առումով, թե՛ երկրի կյանքի այս կամ այն ոլորտում առաջատար դիրքեր զբաղեցնելու և ազդեցիկ քաղաքացիներ լինելու առումով: Ուստի, այն դեռևս չէր կարող լուրջ ներգործություն ունենալ համապետական նշանակություն ունեցող և դաշնային իշխանությունների իրավասությունների դաշտում ընթացող գործընթացների վրա: Հայ համայնքի ազդեցիկությունն առայժմ սահմանափակվում էր միայն քիչ թե շատ զգալի հայ բնակչություն ունեցող առանձին նահանգներով: Ամենևին էլ պատահական չէ, որ առաջին նահանգը, որն արձագանքեց ամերիկահայության կոչին, Կալիֆորնիան էր, որտեղ բնակվում էր այն ժամանակ ավելի քան 400 հազար անդամ ունեցող ամերիկահայ համայնքի համեմատական մեծամասնությունը՝ շուրջ 140 հազարը:

Հարկ է նկատել, սակայն, որ նույնիսկ ավելի ուշ, երբ ամերիկահայության քաղաքական կշիռը զգալիորեն մեծացավ և նրա ջանքերով Հայոց ցեղասպանությունը դարձավ դաշնային իշխանությունների ներկայացուցիչների քննարկման առարկա, այդ կշիռը մեծացավ նաև (գուցե՝ առաջին հերթին) առանձին նահանգներում: Նահանգային իշխանությունները մնացին իրենց հայազգի ընտրողների ավելի անմիջական ու լուրջ ազդեցության ներքո, ուստիև շարունակեցին հանդիսանալ Հայոց ցեղասպանության ճանաչման դրոշակակիրները: Այս համատեքստում միանգամայն բնական է, որ տարեցտարի Հայոց ցեղասպանությունը ճանաչող և հետագայում պարբերաբար ցեղասպանության զոհերին ոգեկոչող նահանգների թվում առաջին տեղերում էին այն նահանգները, որոնցում հայ համայնքի ներկայությունն ավելի զգալի էր: Այսպես, Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին իսկ քայլերից մինչև օրս ցեղասպանության ճանաչման ամենաեռանդուն ջատագովը եղել և մնում է Կալիֆորնիա նահանգը, որտեղ բնակվում է հայկական ծագում ունեցող ամերիկացիների ամենամեծ մասը: Գրեթե նույն ուժգնությամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչել, ապա նաև այդ ճանաչումը վերահաստատել ու վերահաստատում են Նյու Յորքը և Ռոդ Այլենդը: Հայոց ցեղասպանության ճանաչման ու զոհերի հիշատակի հավերժացման գործընթացը բավական մեծ թափով ընթացել և ընթանում է նաև Վիրջինիա, Փենսիլվանիա, Միչիգան, Մերիլենդ, Նյու Ջերսի, Կոլորադո, Իլինոյս և այլ նահանգներում:

Այսպիսով, դաշնային իշխանությունների կողմից հարցի արծարծման արդյունքում առանձին նահանգներում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ոչ միայն չմարեց, այլև շարունակվում է առավել ուժգին ձևով: 1965թ. հաջորդած ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ Կոնգրեսը և երկրի նախագահները միայն խիստ երկարատև ընդմիջումներից հետո էին անդրադառնում Հայոց ցեղասպանության խնդրին, ամերիկյան նահանգները շարունակում էին մեկը մյուսի հետևից ճանաչել և դատապարտել 20-րդ դարում մարդկության դեմ գործված առաջին հանցագործությունը: Ընդ որում, նահանգային օրենսդիր մարմինների բանաձևերում ու նահանգապետերի հայտարարություններում ավելի մանրամասն էին ներկայացվում Հայոց ցեղասպանության սկիզբը, ընթացքն ու հետևանքները, ծավալները, ցեղասպանության՝ կանխամտածված ու կազմակերպված

պետական քաղաքականություն լինելը, ավելի բացահայտ էր ընդգծվում ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու և դատապարտելու, այդ ճանապարհով հետագա ցեղասպանությունները կանխարգելելու անհրաժեշտությունը, այդ թվում և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը:

Առհասարակ, ամերիկյան նահանգներում և, ընդհանրապես, այդ երկրում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին խոսելիս հարկ է նկատել, որ գործընթացի սկզբից մինչև օրս հստակորեն առանձնացել են մի քանի ալիքներ: Այսպես, առաջին ալիքը բարձրացավ 1965թ., երբ ամերիկահայ համայնքը նշում էր Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, ընդ որում՝ տարելիցի նշման միջոցառումներն աննախադեպ ծավալներ և հնչեղություն ունեին, ուստիև կարողացան որոշակի արդյունքներ արձանագրել:

Այսպես, 1965թ. Կալիֆորնիա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունեց Ասամբլեայի թիվ 274 բավական ծավալուն բանաձևը, որում ասված էր. «…50 տարի առաջ՝ 1915-ի ապրիլի 24-ին Թուրքական կայսրության կառավարությունը, իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, սկսել է հայ ազգի բնաջնջման սիստեմատիկ ծրագիրը: …1915-1918թթ. թուրքական հոլոքոստի ընթացքում ողջ հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատները և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ է կրել: …Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որն այսքան շուտ մոռացվի, ինչպես հայերի թուրքական ցեղասպանությունը» [1]: Նույն թվականին Կալիֆորնիայի նահանգապետ Էդմունդ Բրաունը հանդես եկավ հայտարարությամբ, որում նշում էր. «1915թ. Հայկական կոտորածի հիշատակի այս օրն աշխարհը պետք է դադար տա՝ խորհելու պատմական դասերի և նրանց համամարդկային նշանակության մասին: Ես կոչ եմ անում բոլոր կալիֆորնիացիներին միանալ մեր հայ հարևաններին և համաքաղաքացիներին՝ նշելու այն 2 միլիոն հայերի մահը, ովքեր հալածանքների են ենթարկվել և դատապարտվել մահվան…» [2]:

Օրենսդիր ժողովում 1968թ. ապրիլի 15-ին Ասամբլեայի թիվ 78 համաձայնեցված բանաձևի ընդունմամբ Կալիֆորնիան հիմք դրեց ամերիկյան նահանգների կողմից ոչ միայն Հայոց ցեղասպանությունը ճանաչելու, այլև պարբերաբար այդ ճանաչումը վերահաստատելու և նրա զոհերի հիշատակը նշելու ավանդույթին: Կալիֆորնիայի իշխանությունները հետագայում ևս պահպանեցին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում իրենց ունեցած հաստատակամ դիրքորոշումը: Նահանգի Օրենսդիր ժողովը շարունակեց պարբերաբար բանաձևեր ընդունել ցեղասպանության տարելիցների կապակցությամբ: Բանաձևերի ընդունման գործում մեծ դեր խաղացին Օրենսդիր ժողովի անդամներ Փուչիկյանը, Կալուգյանը, Կոստան, Սպայերը, Հորչերը, Բոլդուինը, Աքերմանը, Վայլդմանը, Պեյպանը և այլոք: Հայոց ցեղասպանությունը ճանաչող և նրա զոհերի հիշատակը հարգող բազմաթիվ հայտարարություններ արեցին նահանգապետեր Ջորջ Թոքմեջյանը, Փիթ Վիլսոնը, Գրեյ Դեյվիսը և Առնոլդ Շվարցենեգերը: Առհասարակ, Կալիֆորնիա նահան-

գի կողմից ընդունված՝ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչող իրավական ակտերն իրենց թվով անգերազանցելի մնացին մյուս նահանգների համեմատությամբ: Սակայն ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում Կալիֆորնիայի իշխանությունների դերակատարումը բացառիկ դարձնող գործոնն ամենևին էլ այդ փաստաթղթերի քանակը չէր և ոչ էլ նույնիսկ դրանց բովանդակային ընդգրկումը, այլ Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ ձևավորված լռությունն առաջինը խախտելը, երկար տարիներ ցեղասպանության ճանաչման սկզբում միակ, ապա՝ ամենավճռական ջահակիրը լինելը: Ընդ որում, ոչ միայն 1960-ական թվականների երկրորդ կեսին, երբ լռության խախտումից հետո ընդհանուր առմամբ բարյացակամության մթնոլորտ էր ստեղծվել Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ, այլև հատկապես 1970-1980-ականներին, երբ, այսպես կոչված, հայկական «ահաբեկչությունը», իր նպատակին հասնելով՝ աղմուկ բարձրացնելով և հասարակության ուշադրությունը Հայոց ցեղասպանության խնդրի վրա գրավելով հանդերձ, որոշակի բացասական երանգ էր հաղորդել «Հայկական խնդրի» ընկալմանը, և նաև 1990-2000-ականներին, երբ Կալիֆորնիայի իշխանությունների համառությունն ու վճռականությունը վարակիչ դարձան այլ նահանգների համար:

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու գործում Կալիֆորնիա նահանգին առաջինը միացան Նյու Ջերսին և Նյու Յորքը: Նրանց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթ հանդիսացավ այն հուսադրող տրամադրությունը, որն առաջացրել էին թուրքական զորքերի՝ Կիպրոս ներխուժելուց հետո ԱՄՆ-ում ծայր առած հակաթուրքական տրամադրությունները և 1975թ. ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող Ներկայացուցիչների պալատի թիվ 148 համատեղ բանաձևը: Սա ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում դրսևորված երկրորդ ալիքն էր:

Այսպես, 1975թ. ապրիլի 1-ին Նյու Ջերսիի Գլխավոր ասամբլեան ընդունեց մի բանաձև, որում, մասնավորապես, ասված էր. «1975թ. ապրիլի 24-ին նշվում է 1915-1918թթ. սիստեմատիկաբար իրականացված ցեղասպանության 60-րդ տարելիցը, որի արդյունքում բնաջնջվել են Թուրքիայում բնակվող 1,5-2 միլիոն հայեր» [3]: Նույն թվականի ապրիլի 14-ին համապատասխան հայտարարությամբ հանդես եկավ նահանգապետ Բրենդան Բիրնը: Հայտարարության մեջ նահանգապետն արժանին էր մատուցում ցեղասպանության վերապրածներին և ոգեկոչում էր զոհվածների հիշատակը [4]: 1975թ. ապրիլի 24-ին Նյու Յորքի Օրենսդիր ժողովն ընդունեց Սենատի և Ասամբլեայի համատեղ բանաձևը, որում դատապարտվում էր թուրքական իշխանությունների՝ հայկական ռասան բնաջնջելու փորձը [5]:

Ամերիկյան հաջորդ նահանգը, որը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, Կոլորադոն էր, որի նահանգապետ Ռիչարդ Լեմը 1981թ. ապրիլի 23-ին հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ [6]: Հարկ է նշել, որ թե՛ Նյու Յորք, թե՛ Նյու Ջերսի և թե՛ Կոլորադո նահանգների իշխանությունները, հետևելով Կալիֆորնիայի օրինակին, չբավարարվեցին Հայոց ցեղասպանության ճանաչման մեկանգամյա գործողու-

թյամբ և այդ ճանաչումը վերահաստատեցին նախ 1986-1987թթ., երբ ԱՄՆ-ում երկարատև ու բուռն քննարկումներից հետո Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի վերաբերյալ ՄԱԿ կոնվենցիայի վավերացումը հիմք դրեց ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում դրսևորված երրորդ ալիքին:

Այս ժամանակ՝ 1986-1987թթ., Հայոց ցեղասպանությունն առաջին անգամ պաշտոնապես ճանաչեցին Մասաչուսեթս (1986թ. փետրվարի 19-ին նահանգապետ Մայքլ Դուկակիսի հայտարարությամբ), Միչիգան (1986թ. ապրիլի 13-ին նահանգապետ Ջեյմս Բլենչարդի հայտարարությամբ) և Մերիլենդ (1987թ. ապրիլի 24-ին նահանգապետ Ուիլյամ Շեֆերի հայտարարությամբ) նահանգները [7-9]:

1988-1990թթ. Խորհրդային Հայաստանում ծավալված ազգային-ժողովրդավարական շարժումը և Խորհրդային Միության կազմից դուրս գալու Հայաստանի հետևողական քաղաքականությունը մեծ արձագանք գտան և հսկայական հետաքրքրություն առաջացրին ԱՄՆ-ում: Այս ազդակի հիման վրա սկսվեց ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացում դրսևորված չորրորդ՝ թերևս ամենահուժկու ալիքը: Սկզբում՝ 1989թ., այդ ալիքը դրսևորվեց հիմնականում ԱՄՆ Կոնգրեսում շրջանառվող համապատասխան՝ Ներկայացուցիչների պալատի թիվ 36 համատեղ, Ներկայացուցիչների պալատի թիվ 417 համատեղ և Սենատի թիվ 212 համատեղ բանաձևերով, դրանց շուրջ ծավալված աննախադեպ բուռն քննարկումներով, իսկ 1990թ. նաև Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ նախագահ Ջորջ Բուշ-ավագի պաշտոնական ուղերձով: Դրանում նախագահը 1915-1923թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացված քաղաքականությունն անվանում էր «մարդկության դեմ հանցագործություն» [10]: Ուշագրավ է, որ թեև ցեղասպանությունը դասվում է հենց մարդկության դեմ հանցագործությունների շարքին, այնուամենայնիվ, նախագահ Բուշի դերակատարումն այնքան էլ դրական չէր, քանի որ նա չկատարեց նախընտրական խոստումը և իր ուղերձում 1915-1923թթ. իրադարձությունները չանվանեց ցեղասպանություն, ինչպես և նախագահ Ջիմի Քարտերը 1978թ.: Թեև պետք է ընդգծել, որ ԱՄՆ նախագահի՝ հայերի կոտորածները ցեղասպանություն բնորոշելու գործոնի դերը չպետք է գերագնահատել: Հարկ է հիշել, որ 1981թ. նախագահ Ռեյգանն իր թիվ 4838 ուղերձում օգտագործել էր հենց «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը [11]: Սակայն դա ամենևին էլ չէր ազդարարել ամերիկյան գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու ԱՄՆ-ում այդ գործընթացի ավարտը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ հենց Բուշի վարչակազմի գործուն միջամտությամբ էր, որ վերը նշված բանաձևերը չէին ընդունվել ԱՄՆ Կոնգրեսում:

Ինչևէ, Վաշինգտոնում ալիքի աստիճանական մարումից հետո այն փոխանցվեց նահանգներին և հսկայական ծավալներ ընդունեց: Իրենց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը վերահաստատեցին Կալիֆորնիան, Կոլորադոն, Միչիգանը, Նյու Ջերսին, Մասաչուսեթսը և Մերիլենդը: Զուգահեռաբար առաջին անգամ Հայոց ցեղասպանու-

թյունը պաշտոնապես ճանաչեցին միանգամից 13 ամերիկյան նահանգներ. աննախադեպ երևույթ, որը հետագայում էլ մնաց անկրկնելի: Այսպես, այդ թվականին Հայոց ցեղասպանությունը ճանաչած նահանգների շարքում մեկը մյուսի հետևից հայտնվեցին Վիսքոնսինը, Օկլահոման, Իլինոյսը, Ռոդ Այլենդը, Փենսիլվանիան, Ալյասկան, Վաշինգտոնը, Արիզոնան, Օրեգոնը, Վիրջինիան, Քոնեքթիքութը, Նյու Հեմփշիրը և Ֆլորիդան: Դրանով իսկ Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած ամերիկյան նահանգների թիվը 1990թ. հասավ 20-ի:

Ամերիկյան նահանգներում պարբերաբար Հայոց ցեղասպանությունը դատապարտելու և զոհերի հիշատակը նշելու միտումը 1990թ. դրսևորված ալիքից հետո, ինչպես և նախորդ ալիքների դեպքում, կրկին կտրուկ անկում ապրեց: Միայն Կալիֆորնիան էր, որը փորձեց ապահովել 1990թ. ալիքի շարունակականությունը և 1991թ. ապրիլի 16-ին նահանգապետ Փիթ Վիլսոնի հայտարարությամբ կրկին ոգեկոչեց Հայոց ցեղասպանության զոհերին [12]: Անկումային վիճակը պահպանվեց 1990-ական թվականների գրեթե ողջ ընթացքում: Որոշակի աշխուժություն դիտվեց միայն 1995-1996թթ. և կրկին նոր թափ ստացավ միայն տասնամյակի վերջում՝ 1999թ.:

Հարաբերական աշխուժացման ընթացքում, 1995թ. ապրիլի 11-ին, նահանգի Գլխավոր ասամբլեայի կողմից Սենատի թիվ 19 համաձայնեցված բանաձևի ընդունմամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչած 20 նահանգների կողքին ավելացավ և Դելավերը [13]: 1995թ. ապրիլի 18-ին նահանգի Գլխավոր ասամբլեայում Ներկայացուցիչների պալատի թիվ 107 բանաձևի ընդունմամբ Հայոց ցեղասպանության ճանաչումը վերահաստատեց Փենսիլվանիան [14]: Հայոց ցեղասպանության զոհերին ոգեկոչող հայտարարությամբ հանդես եկավ Վիրջինիայի նահանգապետ Ջորջ Ալենը [15]: Նույն ընթացքում Կալիֆորնիան (սկսած 1994թ. ապրիլի 22-ին նահանգապետ Փիթ Վիլսոնի հայտարարությունից) և Ռոդ Այլենդը (սկսած 1996թ. ապրիլի 24-ին Գլխավոր ասամբլեայում Ներկայացուցիչների պալատի բանաձևի ընդունումից) սկսեցին ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ ամեն տարի անդրադառնալ Հայոց ցեղասպանության խնդրին ու ոգեկոչել ցեղասպանության զոհերին [16-17]:

Ուշագրավ է, որ նույն այդ տարիներին, ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի պաշտոնավարության շրջանում, սկսած 1994թ., Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ նախագահական ուղերձները ևս դարձան ամենամյա: Թեև պետք է խոստովանել, որ բովանդակային առումով սա որևէ փոփոխություն չմտցրեց: Ավելին, իր ուղերձներում Քլինթոնը սկսեց էլ ավելի հպանցիկ անդրադառնալ Հայոց ցեղասպանության թեմային՝ առավելապես կենտրոնանալով Հայաստանի Հանրապետության ապագայի վերաբերյալ ԱՄՆ ունեցած տեսլականի վրա ու խոսելով անկախ պետականություն ու ազատական տնտեսություն կառուցելու, հարևանների և մասնավորապես՝ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, Ղարաբաղյան խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու գործում Հայաստանին սատար կանգնելու ԱՄՆ պատրաստակամության մասին: Այս մոտեցումը պիտի զարգացվեր ԱՄՆ հաջորդ նախագահ Բուշ-կրտսերի ամենամյա ուղերձնե-

րում: Դրանցում ավելի ու ավելի մանրամասնորեն անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրին՝ նախագահը, թերևս, այդ գործընթացին չվնասելու մտադրությամբ, պիտի շարունակեր խուսափել ցեղասպանության շուրջ կենտրոնանալուց և «ցեղասպանություն» բնորոշումից: Մի բան, որը, ինչպես արդեն ասվեց, ամենևին էլ հատկանշական չէր նահանգային իշխանությունների համար:

1999թ., ինչպես վերը նշվեց, ամերիկյան նահանգներում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը նոր թափ ստացավ: Ընդ որում, եթե այդ գործընթացում մինչ այդ դրսևորված ալիքներն, անկախ իրենց ուժգնության աստիճանից և ընդգրկած նահանգների թվից, ժամանակային առումով շատ կարճ էին տևում՝ 1-2 տարի, ապա 1999թ. ծավալված ալիքն իր տևողությամբ ամենաերկարն էր. 1999-2004թթ.: Արդարացի կլինի պնդել նաև, որ թեև այդ ալիքն իր ուժգնությամբ զիջում էր, ասենք, 1990թ. բարձրացած ալիքին, այն, այնուամենայնիվ, որոշակի վայրիվերումներով հանդերձ, ամենակայունն էր մինչ այդ ծավալված բոլոր ալիքների համեմատությամբ: Այսպես, այդ ընթացքում Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչեցին 1999թ.՝ 3 նահանգ (Ջորջիա, Հարավային Կարոլինա և Հյուսիսային Կարոլինա), 2000թ.՝ 2 նահանգ (Մեն և Նևադա), 2001թ.՝ 4 նահանգ (Արկանզաս, Մինեսոտա, Յուտա և Նյու Մեքսիկո), 2002թ.՝ 1 նահանգ (Միսուրի), 2004թ.՝ 6 նահանգ (Այդահո, Լուիզիանա, Թենեսի, Վերմոնտ, Մոնտանա և Նեբրասկա):

Այսպիսով, 1965-2004թթ. Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են ընդհանուր առմամբ 37 ամերիկյան նահանգներ: Ճանաչման գործընթացը դեռ շարունակվում է:

Աղբյուրներ և գրականություն

1. State of California. The Lagislature. Assembly Resolution 274. 1965. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 1:
2. State of California. Office of the Governor. Proclamation. Governor Edmund G. Brown. 1965. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 4:
3. State of New Jersey. General Assembly. Assembly Resolution. April 1, 1975. Տես նաև՝ «Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий». Составитель, ответственный редактор, автор предисловия и коментария доктор юридических наук, профессор Ю.Г. Барсегов, том 2, часть 1, Москва, Гардарики, 2003 (այսուհետև՝ «Геноцид армян. Ответственность...»), док. 1341.
4. State of New Jersey. Executive Department. Proclamation. Governor Brendan Byrne. April 14, 1975. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 70, փաստաթուղթ 1:
5. State of New York. The Lagislature. Senate and Assembly Joint Resolution. April 24, 1975. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 69, փաստաթուղթ 1:
6. State of Colorado. Executive Chambers. Proclamation. Governor Richard D. Lamm. April 23, 1981. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 65, փաստաթուղթ 1:
7. State of Massachusets. Executive Department. Proclamation. Governor Michael Dukakis. Febr. 19, 1986. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 67, փաստաթուղթ 1:

8. State of Michigan. Executive Department. Declaration. Governor James J. Blanchard. March 13, 1986. Տես նաև՝ «Геноцид армян. Ответственность...», док. 1360.
9. State of Maryland. Office of the Governor. Proclamation. Governor William D. Schaefer. April 24, 1987. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 72, փաստաթուղթ 1:
10. The White House. Office of the Press Secretary. April 20, 1990. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 18, փաստաթուղթ 3:
11. The White House. Office of the Press Secretary. April 22, 1981. Տես նաև՝ Public Papers of the Presidents of the United States, Administration of Ronald Reagan, 1981, Washington, Government Printing Office, 1982, p. 459.
12. State of California. Executive Department. Proclamation. Governor Pete Wilson. April 16, 1991. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 55, փաստաթուղթ 3:
13. State of Delaware. 138th General Assembly. Senate Concurrent Resolution 19. April 11, 1995. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 56, փաստաթուղթ 1:
14. State of Pennsylvania. General Assembly. House Resolution 107. April 18, 1995. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 71, փաստաթուղթ 2:
15. State of Virginia. Office of the Governor. Proclamation. Governor George Allen. April 24, 1996. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 57, փաստաթուղթ 2:
16. State of California. Executive Department. Proclamation. Governor Pete Wilson. April 22, 1994. Տես նաև՝ ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 55, փաստաթուղթ 4:
17. State of Rhode Island. General Assembly. House Resolution. April 24, 1996. Տես նաև՝ «Геноцид армян. Ответственность...», док. 1413.